

Սակառի եւ Չամբիդ: Երկրորդը պարսկերենէ ծագած, եւ հոմանիշը յն. κρόφινοςի եւ σπυρίδης, տեսակներ էին զանազան նիւթերէ հիւսուած սակառներու, որոց ձեւերը կը տարբերէին թէ իրարմէ եւ թէ իրենց մէջ՝ արեւմտեայց (Դար. Ա, 1497. Դ, 1446-7) եւ արեւելեայց քով (Վիգ. Բ, 962-3): Այս պատճառաւ անշուշտ κρόφινος մեր մէջ «որր» ալ թարգմանուած ու կոչուած է (Սղմ. 2, 7. Խոր. 214), իրրեւ հայ երրորդ ձեւ մը, հաւանորէն որթի ոստերէ հիւսուած, ուսկից է եւ «որթաւոր» ասանցը (Ոսկ. Թղթ. Ա, 782): Ասոնք սահմանուած էին պէսպէս ծառայութեանց, յորս եւ ուտելեաց փոխադրութեան (Դար. անդ): Հրեայք անոնց մէջ կը լեցնէին իրենց հացերը (Մտթ. ԺԿ, 20. ԺԵ, 37, եւն): Հարկաւ այս ըսպասներն հայ անուանց հետ կային մեր խոհանոցին մէջ եւս՝ հացեփեաց թոնրին քով, բանջարեղէն կրելու եւ այլն, եւ արդէն «սակառին» կը յիշուի ուրիշ գործածութեամբ ալ (Ագթ. 96), եւ «զամբիդը» տեսանք մառանին մէջ (աստ, 31): ՅՏ. Եզնկացին կը համարի՝ թէ «զամբիդքն մեծագոյնը էին քան զսակառիսն» (Մտթ. 342):

Մորթաղ եւ Քուրն: Մին աղած մորթէ